

ՀԱՅՈՂՔ

ՏԵՍԱՆԿԱՐ ԼԵՈՓՈՂ ՌՈՊԷՐԻ.

Այս փառաւոր տեսանկարը Փարիզի ամենէն գեղեցիկ ու չքնաղ հարստութիւններէն մէկն է, ինչպէս նաեւ անոր նկարիչը Լէոփոլ Ռոպէր՝ ժամանակակից գաղղիական դպրոցին ամենէն անուանի նկարչաց մէկն է, այնպէս որ *նոր Փոստին* ըսուելու արժանի եղաւ:

Լէոփոլ Ռոպէր Նեոշաթելի մօտ գեղ մի ծնած է 1794-ին, բայց իւր դաստիարակութիւնը Փարիզ կատարեց: Անկից անցաւ Խապիա, ուր եւ կատարեւազօրծեց ուսումը եւ արժանի նախանձօրդ եղեւ այն անմահ Խալաւցի նկարչաց՝ որոց հոյակապ պատատուները յաւիտենական օրէնք են եւ օրինակ գեղարուեստից:

Լէոփոլ Ռոպէրի բազմաթիւ նկարուցը մէջ աւելի անուանիներն երկու են: Առաջինը կըսուի *Չկնորս*, յորում յայտնի կերեւի Վենետիկոյ երկնքին ու սովորութեանցը տպաւորութիւնը, ուր երկար ժամանակ անցուցեր էր Ռոպէր, եւ ուր կնքեց իւր կեանքը 1835-ին, զո՞ւ առ խուր զգացման մը՝ որ չխնայեց ոչ իւր առոյգ երիտասարդութեանը, ոչ հանճարոյն եւ ոչ փառացը: Իսկ երկրորդը, որ եւ աւելի անուանին, այս *Հնձող* ըսուած տեսանկարն է:

Ամառուան իրիկուն մըն է, — այն գեղեցիկ իրիկուններէն զոր նոքա միայն զիտեն որ իտալիոյ երկնից քաղցրութիւնն են ճաշակած, — հնձողաց ընտանիք մը օրուան աշխատանքէն կղաղնայ ուրախութեամբ, հետը բերելով նաեւ իւր աւարը, իւր հարստութիւնն ու ակնկալութիւնը: Այն ծանր սայլին լծուած երկու գոմէշները իրենց հանդարտ կեցուածքովն ու նայուածքովը՝ կարծես թէ կզգան իրենց երիտասարդ տիրոջ զուարթութիւնը, որ անհոգ կերպով մը վրանին կռնքեմը՝ ձեռքովն ալ կշոյէ նոցա խիստ ու սեւ ստեր: Անդին երկու նուագածու իրենց ուրախ եղանակները նուագելով ու խաղալով՝ կհրաւիրեն ընտանիքը ուրախ զուարթ ընդունելու Աստուծոյ զրրկած սննդաբար պարգեւը:

Այն փողերուն ձայնը՝ քովընտի կեցող հրեւոյն — որ աշխատասէր ձեռքերովը գիրկը որաներով լեցուցեր է — միաբը կրերեն իւր մէկքանի օրէն կատարուելիք հարստեաց հանդէսը, ուր նոյն՝ եւ զուցէ աւելի մեծ ու-

րախութիւն մը պիտի զգայ այն փողերուն ու սրինգներուն դաշնակները լսելով ու ձայնակից լինելով այն կտորիձ երիտասարդին որ սայլին ու հանդիսին առաջնորդն է, ու հնձող ժամանակ՝ արեւուն մէջ աւելի ալ քրտինք թափողը: Բայց իր քոյրը վերը ռաքի վրայ, զիրկն առած առջինեկ նորածին տղան, իւր ամբիձ նայուածքովն ու պարկեշտ կեցուածքովը՝ կարծես թէ կուզէ ըսել որ այն երածշտութիւնը, այն պարերն ու խաղերը, այն երիտասարդութեան ցնորակո՞ծ զուարթութիւնները՝ ալ իրեն համար չեն. ինքք իւր բոլոր մտածութիւնն ամփոփած է իծանք գրելով իւր ամուսնոյն — որ քովը գոմէշին վրայ նստած՝ մտածութեան մէջ ընկըղմած կերեւի, — եւ բոլոր իւր ապագայն՝ այն գեռածին ցանկալի զաւակին վրայ է ժողոված:

Նայեցէք մէջմ'ալ այն սայլին մէջ բազմադ ծերունոյն վրայ որ այս երջանիկ ընտանեաց նահապետն է. հնձող լեցուն պարկերուն վրայ կռնքեմ, զուարթ աչքերը վերէն կքայցընէ կարգաւ երածշտաց, պարողաց, ոսկեգեղ հրեւոյն ու մարը մանող արեւուն վրայ, ու կարծես որ կուզէ ըսել թէ բոլոր սոցա զգացած ուրախութեանց կրկնապատիկը կզգայ նա իսրտի, թէ իւր որդիքը հատուցած են ու տունը հաստատուած ու ապահով, անդաստանները հարուստ են ու արգասանդ, եւ թէ հունձքին վերջը՝ կցուցընէ նաեւ հանգիստ առնելու եղանակը, եւ թէ՛ երկրաւոր աշնան մօտենալը նշան է իրեն թէ իւր կենաց աշունն ալ եկեր հասեր է, եւ թէ այն արեւն որ վերջին շողերը կուտայ՝ իւր արեւն է որ իջեր է ու կմոնայ:

Քանի քանի անգամ այս ու ասոր նման զուարթ ու տխուր մտածութիւններ ըրեր եմք այս հիանալի տեսանկարին սկզբնատպին դիմացը կեցած գմայլած ստեննիս՝ իՓարիզ . . . ինչպէս նաեւ այն ցաւալի նկարչին գերեզմանին վրայ՝ իՎենետիկ թափած եմք քանի մի կաթիլ արտասուք, այն զարմանալի հանճարոյն այն տխուր վախճանը առջեւնիս տեսնելով: Աչաց հետ սրտերնիս ալ իւր տխուր տուրքը հատուցած էր հոն քանի մը տող ոտանաւորով, որ իրենց ընկերակից բազմաթիւ տաղերուն հետ՝ զո՞ւ եղան քաջածանօթ կղզեկի մը անողորմ ալիքներուն . . .

